ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

10 հունիսի 2021թ. **N 137-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՏԻԳՐԱՆ ԴԱՎՈՒԴՅԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի մայիսի 31-ին կայացրել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու համար «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գրանցելու մասին» թիվ 50-Ա որոշումը, որով գրանցել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցելու համար:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի 131-րդ համարի թեկնածու է գրանցվել Տիգրան Աբրահամի Դավուդյանը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակը գրանցելիս ներկայացված են եղել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Ընտրական օրենսգիրք) 84-րդ հոդվածով նախատեսված բոլոր փաստաթղթերը: Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու Տիգրան Աբրահամի Դավուդյանի վերաբերյալ ներկայացված է եղել նրա 25.05.2021թ. գրավոր հայտարարությունը՝ պատգամավորի թեկնածու գրանցվելու համաձայնության մասին, ինչպես նաև լիազոր մարմնի՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի կողմից 19.05.2021թ. տրված թիվ 8/2-1756 տեղեկանքը՝ «Վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին», ինչպես նաև հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթուղթ:

2021 թվականի հունիսի 9-ին Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի N 8-19/8/36550-21 գրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել գրություն, որում նշված է.

«2021թ. մայիսի 17-ին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Արաբկիրի անձնագրային ծառայություն է դիմել Տիգրան Աբրահամի Դավուդյանը (ծնված 06.08.1958թ.)՝ վերջին չորս տարում միայն Հայաստանի

Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին տեղեկանք (այսուհետ՝ տեղեկանք) ստանալու խնդրանքով:

ԱՎ վարչությունում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Տիգրան Աբրահամի Դավուդյանը 06.10.1999թ.-ից հանդիսանում է ՀՀ քաղաքացի, օտարերկրյա պետության, այդ թվում՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիության վերաբերյալ բնակչության պետական ռեգիստրի պահոցում տվյաներ առկա չեն: Ստուգվել է նաև վերջինիս կողմից վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու փաստը, որից հետո 19.05.2021թ. տրամադրվել է թիվ 8/2-1756 տեղեկանքը՝ վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու և վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու վերաբերյալ:

2021թ. հունիսի 3-ին համացանցում տեղեկություն է տարածվել այն մասին, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու Տիգրան Աբրահամի Դավուդյանը հանդիսանում է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի:

Նշված փաստի կապակցությամբ ԱՎ վարչությունը նախաձեռնել է լրացուցիչ ուսումնասիրություններ, որի շրջանակներում Տիգրան Աբրահամի Դավուդյանը հրավիրվել է վարչություն՝ համապատասխան պարզաբանումներ ստանալու նպատակով: Տ.Դավուդյանը հայտնել է, որ հայրենադարձելուց հետո ունեցել է ԻԻՀ անձնագիր, սակայն անձնագրի ժամկետը վաղուց լրացել է և ներկայումս ԻԻՀ քաղաքացու անձնագիր չունի: Տ.Դավուդյանին պարզաբանվել է, որ անձնագրի ժամկետի լրանալը քաղաքացիության դադարեցման հիմք չէ, ինչի կապակցությամբ վերջինս տվել է իր համաձայնությունը՝ ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանություն հարցում կատարելու համար:

07.06.2021թ-ին ԱՎ վարչության կողմից հարցում է ուղարկվել ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանություն՝ Տիգրան Դավուդյանի ԻԻՀ քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, որին ի պատասխան հայտնվել է, որ վերջինիս ԻԻՀ քաղաքացիությունը չի դադարեցվել և նա հանդիսանում է ԻԻՀ քաղաքացի:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է ներկայացված գրությունը, ինչպես նաև գրությանը կից ներկայացված Իրանի Իսլամական Հանրապետության Երևանի դեսպանության 07.06.2021թ. թիվ 103 գրությունը: Նշված գրությամբ նշվում է, որ «…պարոն Տիգրան Աբրահամի Դավուդյանի ԻՀՀ քաղաքացիությունը չի դադարեցվել և վերոնշյալը հանդիսանում է ԻԻՀ քաղաքացի»:

Ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես

բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք»:

Նույն օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն. «Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր է ճանաչվում, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով՝

1) նա չունի ընտրվելու իրավունք.»:

Վերոգրյալ փաստական հանգամանքներով պայմանավորված՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի 131-րդ համարում ընդգրկված թեկնածու Տիգրան Աբրահամի Դավուդյանը չունի ընտրվելու իրավունք:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (որի ընտրական ցուցակում ընդգրկված է Տիգրան Դավուդյանը) լիազոր ներկայացուցչին իրազեկել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարույթի մասին, նրա միջոցով իրազեկվել է ցուցակում ընդգրկված թեկնածուն և առաջարկվել ծանոթանալ փաստաթղթերին ու առկայության դեպքում ներկայացնելու ապացույցներ:

Ներկայացված փաստական հանգամանքի, այն է՝ Տիգրան Աբրահամի Դավուդյանի ԻՀՀ քաղաքացիություն ունենալու փաստը հերքելու վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացվել:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13.1-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Տիգրան Աբրահամի Դավուդյանի (131-րդ համար) գրանցումը ճանաչել անվավեր:

2. Տիգրան Աբրահամի Դավուդյանի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերն ուղարկել Հայաստանի Հանրապետության դատախազություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**